

## ՀՈՂԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Հողը ժողովրդի ամենակարևոր կենսոլորտն է և նրա պահպանությունը, ինչպես նաև արդյունավետ մշակման մակարդակի ապահովումը բոլոր սերունդների գերագույն պարտականությունն է:

Երկրի կեղևի վերին շերտը, որն օժտված է բերրիությամբ, պիտանի է բույսերի աճի, զարգացման համար, կոչվում է հող:

Հողի հիմնական հատկությունը՝ բերրությունն է, որով այն դառնում է գյուղատնտեսական արտադրության հիմնական անփոխարինելի միջոց և աշխատանքի առարկա: Գյուղատնտեսական մշակաբույսերից բարձր բերքի ստացման գործում կարևոր նշանակություն ունի մարդու տնտեսական գործունեությունը՝ ռոտզումը, պարարտացումը, չորացումը և այլն, որի արդյունքում սակավ բերրի հողերը վեր են ածվում բարձր բերրի հողերի:

Ապարների քայքայումը, որի ընթացքում առաջանում է մանրացված զանգված՝ փխրուկ, կոչվում է հողմահարում: Հողառաջացման մեջ ամենից կարևոր դերը պատկանում է կենսաբանական գործնթացին, որի բաղադրիչ մասը օրգանական նյութի սինթեզն է: Բարձրակարգ կանաչ բույսերը լեռնային ապարներից վերվնում են սննդառությոն համար տարբեր, օգտագործում ջուր և ածխաթթու գազ առաջացնում օրգանական մնացորդ: Մեռած բույսերը հարստացնում են ապարը օրգանական նյութերի մնացորդներով: Դանց մի մասը սնունդ է հանդիսանում միկրոօրգանիզմների համար, մյուս մասը հանքայնանում է և օգտագործում նոր օրգանական միացությունների հումուսային նյութերի: հողառաջացման տարբեր շերտերում տեղի է ունենում հանքային, օրգանական և օրգանահանքային նյութերի տեղաշարժ: Այս պատճառով էլ առաջանում են գենետիկական հորիզոնները, որոնց ամբողջությունը կազմում է հողի պրոֆիլ:

Հողակազմող պրոցեսի ընթացքում առաջացած նյութերը՝ հումուսն ու հանքային միացությունները կուտակվում են հողի տարբեր խորություններում:

Հողի հզորությունը որոշվում է հումուս պարունակող հորիզոնների գումարով: Ըստ հզորության հողերը բաժանվում են 4 խմբի՝ **1.Սակավահզոր**, երբ երկու հորիզոնների գումարը 30 սմ-ից պակաս է, **միջին հզորության**՝ երբ գումարը 30-50 սմ է, **հզոր**, երբ գումարը 50-80սմ է և **գերհզոր**, երբ գենետիկական հորիզոնների գումարը մեծ է 80 սմ-ից: Ինչքան հողի գույնը մուգ է, այնքան այն բերրի է:

Հումուսը դա հողում եղած օրգանական մնացորդներն են, որոնք ենթարկվում են հումիֆիկացման: Հումուսը պարունակում է մեծ քանակությամբ սննդատարրեր, որոնք մատչելի չեն բույսերի համար, վերջինս բույսերի համար դառնում է մատչելի բույսերի հողային բակտերիաների ու սնկերի կեսագործունեության արդյունքում: Սակայն հումուսը դերը ավելի կարևոր է հողի ֆիզիկական հատկությունները լավացնելու համար: Հումուսի քանակի պահպանման և ավելացման գործում անհրաժեշտ է՝ բազմամյա և միամյա խոտաբույսեր մշակում, օգտագործել օրգանական պարարտանյութեր, ընտրել հողի մշակման ճիշտ համակարգ:

Մարդը ձգտում է նպատակասլաց և արագ փոխել հողը, տալով նրան ցանկալի հատկություններ: Սակայն միշտ չէ, որ մարդու միջամտությունը ունենում է դրական արդյունք, այսպիսով հողի անսխտեմ մշակման և սխալ ռոտզման հետևանքով աստիճանաբար զրկվում են բերք տալու հատկությունից: